

Ֆ. Տ. Սարգսյանի բացման խոսքը

«Լարգելի» գործընկերներ, հարգելի հյուրեր:
Ձեզ հայտնի պատճառներով մեր տարեկան ժողովը հրավիրվում է բավական ուշացումով: Ինչպես 1992 թվականին, այնպես էլ 1993 թվականի անցած ամիսներին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ինստիտուտների և մյուս ծառայությունների գործունեությունը ընթացել է չափազանց ծանր պայմաններում: Այն ունի իր և՛ օրինակով, և՛ սուրբնականով պատճառները. հայց ստեղծված և՛ քաղաքացիական մեջ իրենց բաժինը ունեն համահայտության կառավարության 1992 թվականի փետրվարի 10-ի որոշման առանձին որոշումները, որոնք, ըստ էության, ինստիտուտները կազմակերպորեն դուրս էին թողնում ակադեմիայի համակարգից, անմացում ևրանց գիտական խորհուրդների ու տնօրենների դերը, դրանով իսկ, փաստորեն հարցականի տակ դնելով ակադեմիայի անհրաժեշտությունը որպես հիմնարար գիտությունների կազմակերպման հիմնական օղակ:

Ստեղծված այդ անբարենպաստ վիճակում ակադեմիայում գոհունակությամբ ընդունվեց հանրապետության նախագահ Լեվոն Տեր-Պետրոսյանի 1993 թ. մարտի 9-ի հրամանագիրը՝ «Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի մասին», որով սահմանվեց ակադեմիայի նոր կարգավիճակը, զգալիորեն բարձրացվեց նրա դերը ու տեղը և միաժամանակ պատասխանատվությունը հիմնարար գիտությունների հետագա զարգացման և նրանց արդյունքների ներդրման գործում:

Չեմ կարող չընել նաև այն փաստը, որ արդեն կատարական մարմինների կողմից մենք շոշափելիորեն զգում ենք ուշադիր վերաբերմունք դեպի ակադեմիան և, որ ամենակարևորն է՝ բարի ցանկություն, հնարավորության սահմաններում լուծելու կուտակված բազմաթիվ ցավոտ հարցերի գուճն մի մասը:

Իմ այս բացման խոսքում չեմ թվարկի

հաշվետու ժամանակաշրջանում մեր գիտական ձեռքբերումները: Դրանց մասին խոսվեցին բաժանմունքների տարեկան ժողովներում և այսօր կընդհանրացվեն ՔԱԱ ակադեմիկոս քարտուղարի զեկուցման մեջ:

Ծանկանում եմ միայն համատեսակի կանգ առնել ակադեմիայի առջև դրված կարևորագույն խնդիրների վրա, որոնց հաջող լուծումից զգալիորեն կախված է մեր աշխատանքների հետագա արդյունավետությունը:

1. Ամենից առաջ դա ակադեմիայի օրինադրության ընդունման հարցն է: Բոլորս լավ գիտակցում ենք, թե որքան կարևոր է ժամանակի ոգուն համահունչ օրինադրություն ստեղծելը, որը և դառնալու է մեր ապագա գործունեության իրավական հիմքը:

Ակադեմիայի նախագահությունը վաղուց է ձեռնամուխ եղել այդ գործին: Արդեն նախնական տարբերակը նախագահության մակարդակով բնական է: Բայց տակալին կան հիմնադրություններ, որոնք պահանջում են նախագիծը բազմակողմամբ որոշելու ուսումնասիրել և հատկ կարծիք կազմել և ձեռք բերելուց հետո միայն ներկայացնել հետագա մշակման, ակադեմիայի ընդհանուր ժողովի հավանությանը արժանացնելուց հետո ներկայացնել հանրապետության կառավարության հաստատմանը:

Մեր կարծիքով, առաջին հերթին անհրաժեշտ է ակտիվացնել գիտական կոլեկտիվների մասնակցությունը բաժանմունքների և ակադեմիայի նախագահության աշխատանքներին, ակադեմիայի անդամների և նրա դեկալստր մարմինների կազմը համարել ևրիտասարդ գիտնականներով, առավել դեմոկրատացնել նախագահության աշխատանքը:

Ակադեմիայի կանոնադրությունը ընդունելուց հետո ձեռնամուխ ենք լինելու ակադեմիայի բաժանմունքների, գիտահետազոտական ինստիտուտների և մյուս ըստորաբաժանումների կանոնակարգերի ըստեղծմանը:

Կասկած չկա, որ մեր գլխավոր նպատակն է՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծել ակադեմիայի երբեմնի փառքը պահպանելու համար և ակադեմիայի ամբողջ մտաուծն ու կարողությունը ի սպաս դնել հանրապետության ու ժողովրդի վերածննդի գործին:

2. Ծորչ 50 տարի առաջ, Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին, հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի ստեղծման գործում մեծ ավանդ ունի խոշորագույն գիտնական, ակադեմիկոս Հովսեփ Օրբելի՛ն՝ մեր առաջին արեզիդենտը: Աշխարհափոշակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի 40 տարվա անընդմեջ դեկալստրությամբ Հայաստանի ակադեմիան ձևավորվեց, զարգացավ և համաշխարհային ճանաչում ձեռք բերեց, դառնալով առաջավոր ակադեմիաներից մեկը:

Որո՞նք են այն խնդիրները, որոնց անհայտ լուծումը, մեր կարծիքով, ուղեհիշ պետք է դառնա ակադեմիայի հետագա գործունեության համար:

Առաջին՝ վատելիքաձեռքգետիկ և ժողովրդական տնտեսության զարգացման համար կենսական նշանակություն ունեցող շատ ունեւորներից զուրկ լինելու պատճառով, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում և հետ

ուսակարում կարևոր նշանակություն է ձեռք բերում հայ ժողովրդի գենետիկական պոտենցիալի, այդ թվում՝ գիտության և հոգևոր մշակույթի ըստ ամենայնի զարգացումը:

Պետք է նկատել, որ ոչ մի երկիր համաշխարհային ճանաչման ու ծաղկման չի հասել առանց սեփական գիտության և հոգևոր մշակույթի զարգացման: Այնպես որ, եթե մենք ուզում ենք հանրապետությունը համաշխարհային զարգացման առաջին շարքերում գտնվող պետությունների թվում տեսնել, ապա հարկավոր է առանձնահատուկ պայմաններ ստեղծել այդ երկու բնագավառների համակողմանի զարգացման համար:

Ծուկայական էկոնոմիկային անցումը գիտության առջև, հիմնարար գիտության զարգացման հիմնադրարձի լուծման հետ միասին, նոր հրատապ խնդիրներ են դրնում: Առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում գիտության ինքնակառավարման համակարգի պայմաններում գիտական հայտնագործությունների, հետազոտությունների արդյունքների բազայի վրա գիտատեխնիկական առաջնահերթ մշակումների ապահովումը, տեխնիկական գյուտերի և նորոյթների արտոնագրումը ու համաշխարհային շուկայում դրանց լիցենզիաների իրացումը:

Երկրորդ՝ նույն կարևորության մակարդակի վրա է դրվում հանրապետության քրեական ունեւորների (հանքահումքային, գյուղատնտեսական, ուղիղագիտական և այլն) օգտագործման գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական խնդիրների մշակումը և ժողովրդական տնտեսության մեջ դրանց մատչելի կիրառումը:

Այս երկու բնագավառներում էլ հանրապետության ակադեմիան և մյուս գիտական օղակները լրջորեն ետ են մնում:

Գիտության առջև ծառայած այս և այլ խնդիրների լուծումը պահանջում է առավել մեծ ուշադրություն դարձնել ակադեմիայի համակարգում կիրառական հետազոտությունների և փորձարարական աշխատանքների ծավալմանը: Այլ խոսքով, կյանքը պահանջում է, որ գիտական հետազոտությունը հասցվի իր շղթայի ավարտում փոփոխ՝ գիտատեխնիկական մշակումների, տեխնոլոգիական և տեխնիկական նորոյթների, արդյունաբերական նմուշների, գյուտերի մակարդակին, որ ժողովրդական տնտեսության մեջ ներդրելու և համաշխարհային շուկա մուտք գործելու նպատակով ունենա:

Մենք չպետք է մոռանանք ակադեմիայի պատասխանատվությունը նաև այնպիսի կարևորագույն ասպարեզներում, ինչպիսիք են՝ վառելիքաձեռքգետիկ համակարգի համար նոր տիպի նյութեր և սարքեր մշակելը, որը պայմաններ կստեղծի դուրս գալու ստեղծված ծանր վիճակից: Ես սա շեշտում եմ առանձնահատուկ ձևով, որովհետև այն այսօր հույս կարևոր և հրատապ հարց է:

Նույնպիսի բարդ խնդիրներ կան կենսաբանության, քիմիայի, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բնագավառներում:

Մի՞թե հասարակական գիտությունների, մասնավորապես հայագիտության, մեր ժողովրդի պատմության բնագավառներում մեր պարտքը չէ նրանց հետագա զարգացմանը նպաստելը:

Տրամաբանական է, որ նման խնդիրների լուծումը պահանջում են գիտության

տեխնիկական բազայի և գիտահետազոտական (այդ թվում՝ նախագծային, կոնստրուկտորական) աշխատանքի կազմակերպման նոր մակարդակ, պետության և կառավարության մակարդակով մշակող և իրականացվող լուծումներ: Ըստ երևույթին անհրաժեշտ կլինի նաև հանրապետությունում ստեղծել այդ գործընթացին նպաստող ինովացիոն նախագծերի քանակ:


Այս նոր մոտեցումները, կարծում եմ, բնավ չեն թողնի այն տալավորությունը, թե ՀՀ ՔԱԱ-ն հետանում է իր ապագայական հիմնարար հետազոտությունների ուղղություններից: Հիմնարար հետազոտությունները եղել են, կան և մնում են մեր ակադեմիայի գործունեության գլխավոր առանցքը: Մի բան պարզ է, որ առանց գիտական հայտնագործությունների, գիտական նորոյթի տեխնիկական, տեխնոլոգիական նոր ուղղությունների, տեխնիկական գյուտերի ստեղծումը և զարգացումը համաշխարհային մակարդակով անհնար է:

Այսուհանդերձ, մեր կյանքի ներկա պայմանները առավել գործնական նոր խնդիրներ են առաջադրում ակադեմիայի ինստիտուտների կոլեկտիվներին: Կարծում եմ, որ հիմնարար հետազոտություններին զուգահեռ, նրանք ձեռնամուխ կլինեն գիտատեխնիկական խնդիրների մշակմանը, շեքողնելով այդ հարցերը պատասխան, ոչ հմուտ գործարար մարդկանց տնօրինությանը:

Այսօր առաջնահերթ է դարձել գիտության և մտավոր գործունեության մյուս բնագավառների աշխատողների սոցիալական պաշտպանվածության համակարգի ստեղծումը: Նյութական անապահով վիճակը կենսական միջոցների և դեղորայքի գների, ծառայությունների սակագների, քուծման ծախսերի անհամապատասխանությունը, նրանց վարձատրությունը, առաջ է բերել մի կողմից՝ գիտական-ստեղծագործական աշխատանքի արդյունավետության խիստ անկում, իսկ մյուս կողմից՝ գիտության ու մտավոր գործունեության ոլորտներից՝ որակյալ աշխատողների արտահոսք ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներ և արտասահմանյան երկրներ:

Գիտության և մտավոր գործունեության բոլոր ոլորտների աշխատողների համար երազանք են դարձել ստեղծագործական գործուղումները, ակտիվ հանգիստը, կուլտուրական և գիտական միջոցառումները:

Ծուկայական հարաբերությունների պայմաններում մենք պետք է կարողանանք օգտագործել ընձեռված հնարավորությունները՝ լրացուցիչ միջոցներ հայթայթելու և դրանք նպատակամղեց գիտական աշխատողների սոցիալական դրության բարելավմանը: Ժամանակն է ստեղծել մի հատուկ մեխանիզմ այդ գործընթացը մշակելու և ճիշտ օգտագործելու համար: Մենք գտնում ենք, որ առանձին՝ միմյան շուկայական էկոնոմիկայի կառուցվածքների ձևավորումը, հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ֆինանսավորումը նպատակահարմար է կատարել ըստ գիտության ուղղությունների պետական բյուջեից բազային ֆինանսավորման կարգով, որը կտրամադրվի հիմնականում միայն հիմնարար հետազոտությունների զարգացմանը: Երրորդ՝ պետական կարևորագույն պատվերային և պետական գիտատեխնիկական ծրագրերի մշակման, փորձագիտության և մրցութային փուլերով անցած թեմաների պետության կողմից ֆինանսավորման միջոցով, կառավարության և ակադեմիայի նախագահության միջև պետականության կնքման մակարդակով



Լուսանկարը՝ Վ. ԱՄՍՈՒՅԱՆԻ





Նույնպիսի մոտեցում պետք է ցուցաբերվի բուհական և ճյուղային գիտական համակարգերում: Երրորդ՝ երաշխավորների օգնությամբ թեմատիկայի ֆինանսավորման միջոցով: Ֆինանսավորման այս հիմնական աղբյուրների հետ միասին ակադեմիայի ինստիտուտներն ակտիվորեն կարող են մասնակցել պետական և ոչ պետական այլ կառույցների պատվերային թեմաների կատարմանը, որոնք կարող են լրացուցիչ ֆինանսական միջոցների աղբյուր ծառայել:

Կարծում եմ, այդ տեսանկյունից ժամանակն է վերանայելու Նախարարների խորհրդի 1991 թ. փետրվարի 10-ի՝ գիտության ֆինանսավորման մասին որոշումը:

Հանրապետության վառելիքաէներգետիկ հստակարգի ծանր, ճգնաժամային վիճակի հետևանքով փաստորեն դադարեցվել է շատ ինստիտուտների և ձեռնարկությունների աշխատանքը: Կատարվող ուղիներ է փնտրում հնարավորության սահմաններում լուծելու ինստիտուտներին էլեկտրաէներգիա մատակարարելու խնդիրը: Սակայն այդ հարցը առայժմ լիովին լուծել հնարավոր չէ և պետք է մեծագույն խնայողությամբ ու միաժամանակ նպատակապես արդյունավետությամբ օգտագործենք հրակայան էլեկտրաէներգիան: Ժատ մեծ մտահոգության առարկա է այն հանգամանքը, որ շուտով, արդեն հունիսի 23-ից հետո, օրերը կսկսեն կարճանալ և առջևներս ձմեռն է: Պետք է մեր աշխատանքները ճիշտ կազմակերպենք: Ժամանակը չի սպասում:

Չափազանց կարևոր է ակադեմիայի համակարգի նյութատեխնիկական մատակարարման բարելավման հարցը: Հայտնի է, որ ինստիտուտների նյութատեխնիկական բազան ընդհանրապես թույլ է եղել և նրա վիճակը վերջին տարիների ընթացքում ավելի է վատթարացել: Մեծ թրվով կարևորագույն հետազոտություններ չեն ավարտվել նյութեր, սարքեր, անասնակեր և այլ անհրաժեշտ նյութական միջոցներ չլինելու պատճառով:

Այո՛, չափազանց թուլացել է ակադեմիայի գործունեությունը: Չկան իրավիճակից դուրս գալու խելացի առաջարկներ: Դժբախտաբար, տնօրեններից շատերը ևս հաշտվել են ստեղծված իրավիճակի հետ, ամեն ինչ վերագրելով շրջափակումներին և դրամական միջոցների սակավությանը:

Չբացատրելով այդ հանգամանքները, կարծում եմ, որ անգամ այս պայմաններում կարելի է ելքը գտնել: Իհարկե, շատ հարցեր ժամանակին պետք է լուծված լինեին: Դրանց հնարավորությունը կար: Բայց այն չի օգտագործվել և առաջացել են լուրջ խնդիրներ, որոնց իրականացումը հրամայաբար պահանջում է առաջին հերթին կատարելիքների օգնությունը:

3. Մեծ մտահոգություն է պատճառում մեր պոլիգրաֆիական սարքավորումների հարցը: Գաղտնիք չէ, որ հիմնարար գիտությունների արդյունքները հանրաճանաչ են դառնում այն ժամանակ, երբ դրանք հրատարակվում են: Իսկ ակադեմիան տասնամյակներ շարունակ գուրկ է պոլիգրաֆիական ժամանակակից սարքավորումներից և այլ նյութերից: Ինչպես ասում են, այլևս անհանջելու տեղ չունենք: Այս մասին չափազանց խիստ խոսվեց մեր բոլոր բաժանմունքների միասերում: Վերջներս ակադեմիական 14 հանդեսները: Վերջերս մի քանի անգամ և՛ խմբագրական-հրատարակչական խորհուրդը, և՛ նախագահությունը անդրադարձել են դրանց հրատարակության հարցերին: Կատարվող ուղիները ընդառաջելով մեր խնդրանքին, հանդեսների գոյությունը մի կերպ պահպանելու նպատակով մեզ նվազագույն չափով գումար հատկացրեց: Սակայն էլեկտրաէներգիայի բացակայության և հրատարակչական բազայի աղքատության պատճառով վերջին երկու տարիներին հանդեսների միայն միաց հատուկներ են լույս տեսել:

չակամ բազայի աղքատության պատճառով վերջին երկու տարիներին հանդեսների միայն հատուկներ համարներ են լույս տեսել:

Մենք գրկված ենք գիտական աշխատություններ հրատարակելու հնարավորությունների:

Ակադեմիայի հրատարակչական բազայի բարելավման ու կարգավորման հարցն այսօր առաջնային է դարձել: Ակադեմիայի նախագահությունը այս հարցի լուծման ուղիների որոնման ընթացքում ակնկալում է կատարության ակտիվ աջակցությունը:

4. Մի՞թե այժմ հիմնականում խոսվեց ակադեմիայի սեփական համակարգի գիտական գործունեության կազմակերպման և արդյունավետության բարձրացման հարցերի և հիմնականներին մասին:

Բայց հիշենք, որ բարելավելով ակադեմիան, համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի, ըստ անձնում է նոր պարտավորություններ հանրապետության ամբողջ գիտության և պետական գիտական քաղաքականության ձևավորման ուղղությամբ: Առաջին հերթին նկատի ունենք հանրապետությունում հիմնարար գիտությունների զարգացումը համակարգող, պետության պաշտոնական գիտական խորհրդատուի և փորձագետի լիազորությունները, որոնք պահանջում են ըստեղծել նոր իրավական կազմակերպական մեխանիզմներ և կառույցներ:

Ակնհայտ է, որ նպատակապես պետական գիտատեխնիկական քաղաքականություն դեռևս չկա: Չկան նաև հանրապետության գիտության զարգացման հեռանկարային ծրագրեր: Այստեղ ևս մեր անելիքները շատ են և պատասխանատու:

5. Չափազանց մեծ են մեր անելիքները գիտական թուլացած կապերը վերականգնելու և արմատապես բարելավելու գործում: Ստեղծվել է մի իրավիճակ, որի հետևանքով խախտվել են ինստիտուտների ակտիվ կապերն ինչպես նախկին Խորհրդային Միության հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, այնպես էլ արտասահմանյան գիտական կենտրոնների և կազմակերպությունների հետ:

Այժմ մենք ձեռնարկում ենք մի շարք լուրջ միջոցառումներ նախ՝ Ռուսաստանի գիտական կենտրոնների, և առաջին հերթին Ռուսաստանի ակադեմիայի հետ մեր կապերի վերականգնման ուղղությամբ: Հարցի բարդությունը մեծ չափով կապված է ֆինանսական միջոցների բացակայության հետ: Ինչպես գիտեք, ինստիտուտների ֆինանսավորման 70 տոկոսից ավելին ծախսվում է միայն աշխատավարձի վրա, թեև այն նույնպես չափազանց ցածր է: Այսպիսով, գործողությունների ծախսերն ապահովելու համար անհրաժեշտ են մեծ ինվեստիցիաներ:

Առավել բարդացել է արտասահմանյան երկրների գիտական կենտրոնների հետ կապերի ընդլայնումը: Այսօր արտասահման են մեկնում հիմնականում այն գիտաշխատողները, որոնց թեմաները հետաքրքրություն են ներկայացնում արտասահմանի համար: Այդպիսի գործողությունների ծախսերն իրենց վրա են վերցնում հրավիրող կողմերը: Իսկ մենք, տարադրամի բացակայության պատճառով, հնարավորություն չունենք մեզ համար առաջնային նշանակություն ունեցող թեմաների մըշակման համար կազմակերպել արտասահմանյան գործողություններ: Վերջերս կատարվող ուղիները ընդառաջելով մեր խնդրանքին, այդ նպատակի համար հատկացրել է որոշ գումար, բայց դժբախտաբար դա մեզ չի բավարարում: Մենք պետք է մըտածենք և միջոցներ փնտրենք, փոխաֆախ գործողությունների միջոցով օգնենք հարցի լուծմանը:

Գնալով խորանում է լրատվական քաղցրը, իսկ գիտությունը մեկուսացված չի կարող զարգանալ: Մենք պետք է շատ լուրջ մտածենք գիտական լրատվության հը-

տակ համակարգեր ստեղծելու մասին: Գիտության զարգացման համար մեր դրվող գումարները երբեք կորած չեն և կարող են տասնամյակով փոխհատուցվել:

Եթե նպատակապես օգտագործվեն:

6. Այժմ ավելի քան երբեք, դժվարացել է երիտասարդ գիտնականների պատրաստման գործը: Մի կողմից՝ առկա են օրյելիով պատճառները, մյուս կողմից՝ ոչ օրյելիով պատճառներն են այդ չափազանց բոլոր ինստիտուտներն են այդ չափազանց կարևոր բնագավառին պատշաճ ուշադրության դարձնում: Նույնը վերաբերում է ակադեմիայի կազմին: Երկար տարիներ է ընդմեջ խոսում ենք այն երիտասարդացնելու մասին, սակայն գործնական քայլերի չենք դիմում: Ակադեմիայի նախագահությունը պետք է լրջորեն մտածի այս ուղղությամբ և մշակի հստակ ծրագիր ակադեմիայի կազմը երիտասարդացնելու և բարձրորակ կադերով համարելու համար:

Այստեղ մեծ նշանակություն է ստանում հանրապետության բուհերի հետ ակադեմիայի համագործակցության զարգացումը: «Բուհ-ինստիտուտ» ընկերակցական կապերի և կառույցների զարգացումը թույլ կտա սինթեզել մեր բուհերի գիտաձեռնարկական կարելիությունները ակադեմիայի հետազոտական փորձարարական քաղաքի հետ, ստեղծել ապիրանտական ուսուցման, երիտասարդ գիտնականի ձևավորման նոր որակ:

7. Հատուկ հոգածության առարկա պետք է դառնան կատարվող գիտաձեռնարկական աշխատանքների գիտական մակարդակի բարձրացումը, գիտականակերպական աշխատանքների և կատարողական կարգապահության հարցերը: Չթաքցնենք և խոստովանենք, որ որոշ ինստիտուտներում խիստ ընկել է աշխատանքային կարգապահությունը: Թույլ է առանձին ինստիտուտների տնօրենների պահանջկոտությունը, իսկ երբեմն էլ իրենք՝ տնօրեններն են դառնում կարգապահության խախտողներ:

8. Վերևում արդեն ասվեց, որ վերջին երկու տարիներին հայտնի պատճառներով մասամբ խզվել էին կապերը ակադեմիայի նախագահության և ինստիտուտների միջև: Հանրապետության նախագահի հրամանագրից հետո այդ կապերը աստիճանաբար վերականգնվում են: Նախագահությունը պարբերաբար լսում է ինստիտուտների տնօրենների գիտական-կազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները, վերականգնում է վերահսկողության իր ֆունկցիաները: Սակայն անիշխանության մթնոլորտը ըստ երևույթին դուր էր գալիս ոմանց: Այսօր, երբ կանոնադրական պահանջների համաձայն վերականգնում ենք ԳԱԱ նախագահության վերահսկողական ֆունկցիաները, երբեմն տեղերից խուլ բողոքներ են լքվում, թե ոտնձգություն է կատարվում ինստիտուտների ինքնուրույնության նկատմամբ: Չպետք է մոռանալ, որ ակադեմիան մի ընդհանուր, միասնական համակարգ է, մի մարմին, և պետության առջև այդ համակարգի գործունեության արդյունավետությունն ապահովելու պատասխանավետությունն ընկնում է ակադեմիայի նախագահության վրա: Այս հարցում այլ մոտեցում չի կարող լինել:

Հարգելի՛ գործընկերներ, հարգելի՛ հյուրեր:

Ես կանգ առա միայն մի քանի առաջնահերթ հարցերի վրա և կարծում եմ այս հակիրճ խոսքում, որով բացում եմ ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, ավելի ծավալվելու անհրաժեշտություն չըկա:

Ավարտելով խոսքս, հավաստիացնում եմ, որ ԳԱԱ նախագահությունը և անձամբ ես, մեծագույն պատասխանատվությամբ ենք վերաբերվում մեր նկատմամբ ակադեմիայի անդամների կողմից ցուցաբերած վստահությանը և կանենք ամեն ինչ, ակադեմիայի առջև ծառայած խընդիրները հաջողությամբ լուծելու համար: